

## 2019/2020 ուսումնական տարվա ընդունելության Դիմում-հայտերի և փաստաթղթերի հանձնման կարգ

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում մեկնարկել է 2019/2020 ուսումնական տարվա ընդունելությունը:  
Դիմում-հայտերի և փաստաթղթերի հանձնումն իրականացվում է երկու փուլով:

Դիմում-հայտերի և փաստաթղթերի հանձնման առաջին փուլով կարող են դիմել.

- տվյալ ուսումնական տարում ավագ (միջնակարգ) դպրոց ավարտող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները;
- նախնական մասնագիտական, միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտները:

Առաջին փուլով փաստաթղթերն ընդունվում են ս/թ մայիսի 5-ից մինչև հունիսի 1-ը ներառյալ (հանգստյան օրերն են՝ մայիսի 9, 11, 12, 19, 28) ժամը 09:30-16:00, վերջին օրը՝ հունիսի 1-ին 09:30-18:00:

Դիմում-հայտերի և փաստաթղթերի հանձնման երկրորդ փուլով կարող են դիմել.

- օտարերկրյա ուսումնական հաստատությունը տվյալ ուսումնական տարում ավարտող երկքաղաքացիները կամ օտարերկրացիները;
- օտարերկրյա ուսումնական հաստատությունը տվյալ ուսումնական տարում ավարտող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները;
- այս տարվա գարնանային գորակոչին գորացրվող քաղաքացիները;
- նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների այս տարվա շրջանավարտները:

Երկրորդ փուլով փաստաթղթերն ընդունվում են ս/թ հունիսի 25-ից մինչև հուլիսի 2-ն ընկած ժամանակահատվածում ժամը 09:30-16:00, վերջին օրը՝ հուլիսի 2-ին 09:30-18:00:

### **Ընդունելության քննությունների վճարից ազատվում են՝**

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները;
2. 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձինք և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաները;
3. առանց ծնողական խնամքի մնացած՝ մինչև 23 տարեկան երեխաները;
4. պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները զորացրվելուց հետո՝ երեք տարվա ընթացքում:

### **Դիմորդի կողմից ներկայացվող փաստաթղթերը՝**

1. դիմում-հայտ;
2. լուսանկարով տեղեկանք ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ);
3. 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի) ;
4. անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր, կացության վկայական): Անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ:
5. Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ

դարձած քաղաքացիները, 1-ին և 2-րդ խմբերի, ինչպես նաև մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամները և առանց ծնողական խնամքի մնացած՝ մինչև 23 տարեկան երեխաները սույն կարգի սահմանված արտոնություններից օգտվելու համար ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր

6. ներբուհական յուրաքանչյուր քննությանը մասնակցելու, ինչպես նաև փաստաթղթերն ընդունելու և ձևակերպելու համար 1500-ական դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը: